

ՀՈՒՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԻՍՍՀԱԿՅԱՆԸ ԵՎ ԲԼՈԿԸ*

Ա. Վ. ԻՍՍՀԱԿՅԱՆ

1915 թ. սեպտեմբերին, երբ Բրյուսովն առաջարկեց Բլոկին մասնակցել Հայ պոեզիայի թարգմանության աշխատանքներին, վերջինս սիրով համաձայնվեց և Գորկու ու Բրյուսովի հետ իր լուսնային ներդրեց Հայ ժողովրդի հոգևոր զանձերը հրատարակելու գործին:

1915 թ. թվականի օկտեմբերի սկզբներին Բրյուսովն ու Մակինցյանը Բլոկին ծանոթացնում են «Հայաստանի պոեզիա» ժողովածուի համար Իսահակյանի տողացի թարգմանություններին, ինչպես և բանաստեղծի հրապարակի վրա եղած ռուսերեն երկերին: Նույնները ամսից նույն սկսում է թարգմանել Իսահակյանի՝ իր ընտրած բանաստեղծությունները: Բլոկի առջև դրվում է մի նոր ստեղծագործական խնդիր՝ թարգմանել իրեն համարյա անծանոթ մի գրափառության ներկայացուցչի, որն իր խառնվածքին ու մտածելակերպին մոտ էր, բայց և հեռու, իր խոսքերով ասած՝ «պանդուխտ ու գյուղացի» բանաստեղծի և, վերջապես, թարգմանել իր ժամանակակիցին, ու հասակակցին (դա ևս բացառություն էր նրա համար): Բայց և այնպես նա խիղախեց և 1915 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին թարգմանեց 20 բանաստեղծություն Իսահակյանի:

Այս օրերին Պողոս Մակինցյանին գրած նամակում (1915, 1 դեկտեմբերի) Բլոկը խոստովանում է Իսահակյանին թարգմանելու ժամանակ իրեն համակած զգացմունքների մասին. «Ես չէի, որ պիտի ասեմ՝ ինչպես են ստացվել, Բայց պետք է Ձեզ խոստովանեմ, որ ևս բնթաղին սիրեցի: Երբ ասեցի, բանաստեղծին: Հաղորդեցեք նրան, խնդրեմ, սրտագին ողջությամբ խորհրդանշի, որը ձրգտել է վերածել նրա բանաստեղծությունները ռուսերեն լեզվի. որը գոցե և բոլորովին շատար էր նրան»¹:

Ինչպես ամեն գործ, որ հանձն էր առնում Բլոկը, այս թարգմանությունները ևս նա ստանձնեց նվիրումով ու բարձրագույն բարեխղճությամբ: Այդ էն լվալում թարգմանություններին (մեկ բառակալի, տողի, բառի) տասնյակ սևագրություններն ու տարբերակները (ևզել է տող, որ ունեցել է տասնմեկ տարբերակ), ինչպես և ինքնագրերի վրա արված բազմաթիվ գրառումները: Բլոկը հաշվի է առել մինչև իսկ իր կնոջ՝ Լյուրով Դմիտրիենայի դիտողությունը², իսկ թարգմանությունները՝ սևագրերի առաջին անվանաթերթի վրա Բլոկը գրել է. «Որքան տողացի թարգմանություններ, խոսակցություններ ու նամակներ եղան»³: «Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ...» («В грядущи

* Այս թևմայի մասին շատ է գրվել. առաջին գրողներից մեկը գործին մոտ կանգնած Պողոս Մակինցյանն էր, ռուս գրականագետներից՝ Ան. Ֆյոդորովը և Ստ. Ռասսուդինսկու: Առավել նշանակալից են այս ուղղությամբ Կամսար Գրիգորյանի և Լևոն Մկրտչյանի հոդվածները, առաջինը՝ Բլոկի իսահակյանական ինքնագրերի հետազոտման, երկրորդը՝ այդ թարգմանությունների արվեստի, ինչպես և Իսահակյանին ռուսերեն ներկայացնելու սկզբունքների վերհանման իմաստով: Նույն հոդվածով մենք չենք հավակնում տալ այդ պրոբլեմի ամբողջական ընդգրկումը: Զննելով Բլոկի թարգմանությունների ստեղծման պատմությունն ու պոետիկան, մենք հիմնականում ցուցնացել ենք գտնել այն ներքին չիղը, որ կապում է Իսահակյանին ու Բլոկին:

¹ Звезда Востока. Тифлис, 1936, № 1, 15 января.

² Բլոկը «Ես որ մեռնիմ՝ ինձ կթաղեք...» բանաստեղծության («Схороните, когда я умру...») թարգմանության սևագրում՝ «Распустившие волосы нвы» տողը ընդգծել է և կողքին գրել. «Լյուրան գտնում է, որ դա պրոդայիզ է»: Տե՛ս ИРЛИ, архив А. Блока, ф. 654, оп. I, № 154, л. 7.

³ Նույն տեղում, թ. 1:

моей радости творчества...») բանաստեղծության թարգմանության սեպերի (այն այդպես էլ մնաց սեպերի վիճակում) առաջին թերթի լուսանցքում Բլոկը գրել է. «Ուժերից վեր աշխատանք, բոլոր բառերը այս շափի մեջ չեն տեղադրվի: 1915. 20. XII»⁴:

Այնքան մեծ էր ստանձնած գործի նկատմամբ նրա բժախնդրությունը, որ հանձնելով արդեն ապարտիված տեքստերը, Բլոկը խնդրում է, որ իրեն հնարավորություն տրվի տպագրելուց առաջ մեկ անգամ ևս նայելու թարգմանությունները: Նա գրում է Բրյուսովին (1. XII. 1915). «Ահա՛ Իսահակյանի տառերը բանաստեղծությունների իմ թարգմանությունը: Եթե հաջողվի ինչ-որ բան լրացնել կամ ուղղել, ես այն կանեմ մամուլները կարդալիս, ուստի հատկապես խնդրում եմ դրանք ինձ ուղարկել»⁵:

Ծանոթությունը Ալեքսանդր Բլոկի ծոցատեղերի հետ ևս ցույց է տալիս այն լարված աշխատանքի ուժերը, որը համակել էր Բլոկին Իսահակյան թարգմանելու ընթացքում:

«14 նոյեմբերի: Թարգմանում էի Իսահակյան:

Բրյուսովին ուղարկել եմ Իսահակյանի 13 բանաստեղծությունները՝ ղեկտեմերի 2-ին:

1 ղեկտեմերի: Թարգմանում եմ Իսահակյան և Պլուդոն: Ամբողջ օրը թարգմանում եմ և սրտագրում:

17 ղեկտեմերի: Թարգմանում էի Իսահակյան:

21 ղեկտեմերի: Թարգմանում էի Իսահակյան (երեկ էլ):

22 ղեկտեմերի: Տխրանովին՝ Իսահակյանի 7 բանաստեղծությունները»⁶:

Ինչպես երևում է ծոցատեղերի նշումներից, Մակինցյանը մեծապես օգնել է Բլոկին Իսահակյանից թարգմանություններ կատարելիս: Այդ եւս վկայում Բրյուսովին դրած Բլոկի նամակի (1915 թ. ղեկտեմերի 1) հետևյալ տողերը. «Պալել Նիկիտիչի արժեքավոր և բարեկամական ցուցումներից ես ինչքան որ կարողացա օգտվեցի»⁷:

Բլոկի խնդրանքով Մակինցյանը հատուկ գրի էր առել Իսահակյանի բանաստեղծությունների տառագրածուքը ուսերեն լեզվով, որպեսզի Ալեքսանդր Ալեքսանդրովիչը կարողանար ընկալել բնագրի երաժշտականությունը, հնչերանգները, որին Բլոկը շատ մեծ նշանակություն էր տալիս: Պոեզիան նրա համար առաջին հերթին երաժշտություն էր՝ «հոգուն դիպչող ձայների ղողանջ»: Այս առումով Իսահակյանը գերել էր նրան, և թարգմանելիս նա ջանում էր հնարավորին շուտ ամբողջությամբ վերստեղծել նրա բանաստեղծությունների մեղեդայնությունը, հնչերանգները:

Բանաստեղծի մորաբույրը և նրա առաջին կենսագիրը՝ Մ. Ա. Բեկետովան, իր հուշերում պատմում է, թե Բլոկը ինչպես է աշխատել Իսահակյանին թարգմանելու ժամանակ. «Ալեքսանդր Ալեքսանդրովիչը չէր բավարարվում միայն տողացի թարգմանություններով, նա խնդրում էր իր համար բարձրաձայն կարգալ բանաստեղծությունները, որպեսզի հիշեր նրանց ուժերը: Ըստ որում, նա ցուցաբերում էր զարմանալի հիշողություն, մտաբերելով ոչ միայն ուժերը, այլև ամբողջական հատվածներ իրեն բոլորովին անծանոթ լեզվի բանաստեղծություններից: Նրան դուր էր դալիս արտասանել դրանք՝ ինձ ու մօրը: Այդ թարգմանություններով նա հափշտակվել էր: Բուլդոն էլ լավն էին, բայց բոլորից լավ էին ստացվել հայ բանաստեղծ Իսահակյանի հրաշալի բանաստեղծությունների թարգմանությունները: Երբ լույս տեսավ հայկական ժողովածուն (մայիս, 1916), Ալեքսանդր Ալեքսանդրովիչը Մոսկվայից՝ հայ մտավորականների մի խմբից հեռագիր ստացավ, ուր նրան սրտագին շնորհակալություն էր հայտնվում իր կատարած թարգմանության համար»⁸:

Իսահակյան թարգմանելիս բանաստեղծություններ ընտրելու հարցում Բլոկն ազատ էր եղել և ընտրել էր միայն այն, ինչ հարապատ էր իր մտածելակերպին ու խառնվածքին: Հայրենիքի, սիրուհու, եւ մայրական սիրտ թեման առաջնային էին թե՛ Բլոկի, թե՛ Իսահակյանի պոեզիայում: Եվ բնական է, որ ընտրություն կատարելիս Բլոկը չոկել է հիմնականում այդ թեմաների հետ առնչուող ստեղծագործությունները: Այն, ինչ Բլոկի համար Թուսաստան էր, Իսահակյանի համար

⁴ Նույն տեղում, թ. 2:

⁵ А. А. Блок. Собрание сочинений в 8-ми томах. Т. 8, М.—Л., 1963, с. 450—451.

⁶ Александр Блок. Записные книжки 1901—1920. Составление, подготовка текста, предисловие и примечания Вл. Орлова. М., 1965, с. 277, 279—281.

⁷ А. А. Блок. Собр. соч. Т. 8, с. 451.

⁸ М. А. Бекетова. Александр Блок (биографический очерк). Л., 1930, с. 204—205.

Հայաստանն էր: Ինչքան դրամատիկ էր սիրեցյալ էակի կերպարը Բլոկի մոտ, այնքան դրամատիկ ու անհասանելի էր այն նաև Իսահակյանի մոտ: Մայրական սիրո թեման, մոր կերպարը պաշտամունք է եղել երկու բանաստեղծների համար: Հավատարմությունը այս հավերժական ֆեստաներին, ինչպես և բանաստեղծական արվեստի դասական ափսոսանքներին, ինքնին Բլոկին և Իսահակյանին հակադրում էր ժամանակի մոդայիկ, ֆուտուրիստական զրական ուղղություններին և դեկադենտական տրամադրություններին: Նրանց մերձեցնում էր հավատարմությունը պոետական արվեստի բարձր տրադիցիաներին:

1915—1916 թթ., պատմական մեծ վերափոխությունների շեմին, երբ Բլոկը իր ողջ էությունը հակվում էր դեպի ժողովրդի մտածողությունը, դեպի ժողովրդի կենսափոխությունը, անկունները, հանձինս Իսահակյանի գտավ մի բանաստեղծի, որը հնարավորություն էր տալիս նրան հանդուգնվելու ժողովրդի տարհրթին, ժողովրդի մարդու մտածողությանն ու հայրենասիրությանը: Իսահակյանը միաժամանակ նրան երևաց որպես ժողովրդի բանաստեղծի կերպար, մի կերպար, որի մեջ գուցե և ինքը տեսնում էր իսկական բանաստեղծի կոչումը: Նա հանդիպել էր այն պոետին, որը, լինելով տանջված ու տառապյալ, բայց հավիտենապես մաքսոող ազդի զավակ, ի գործու էր իրեն ժողովրդական կենսազգացողություն ու հավատ ներարկել և դա այն ժամանակ, երբ իր հայրենիքը կանգնած էր պատմական գործի շրջադարձի նախաշեմին: Բլոկը իր պոետական ներուժն ավելի զգաց, որ հայ բանաստեղծի և նրա ժողովրդի մտածողության մեջ հիմա ոչ մի անջրպետ, և նրան անկեղծ գերեց այդ ներդաշնակությունը, հարազատությունը հայրենի հողին: Եվ վերջապես, Բլոկին հուզել և ոգևորել էր Իսահակյանի քնարականությունը, որը շրջապատի դեկադենտական բոսորի մեջ հենում էր որպես մի հազվագյուտ մաքրության անաղարտ մեղեդի: Այս ամենը, բնականաբար, Բլոկի մեջ ցանկություն առաջացրեց վերստեղծել Իսահակյանի երկերի համալուծ պատկերը իր հարազատ լեզվով, որը ռուս ընթերցողի համար մի կատարյալ հայտնություն պիտի դառնար: Իսահակյան թարգմանելը Բլոկի համար ունեցավ սեփական երկերի ստեղծմանը համազոր իմաստ, և այս թարգմանություններում էլ նա հասավ այն բարձունքներին, որ հատուկ էին իր լավագույն գործերին: Հասավ ուժերի գերագույն լարման շնորհիվ, քանի որ Իսահակյանը ինչքան որ սիրելի էր իրեն, նույնքան և դժվար թարգմանելի էր:

1915 թ. նոյեմբերի 30-ին Բրյուսովի կնոջը՝ Բոսենա Մատվեևային Բլոկը գրել է. «Ծատցավում եմ, որ այդքան ուշացնում եմ Իսահակյանի բանաստեղծությունները. շնորհիվ թե ևս նրանցով չեմ զբաղվում, ընդհակառակը, շատ ջանք եմ թափում, բայց այդ հրաշալի բանաստեղծը անասելի դժվար է թարգմանության համար: Մինչև օրս արված է սևագիր մոտ 10 բանաստեղծություն, մինչդեռ ես զգուհ եմ իմ արածից: Կաշխատեմ մոտ օրերս ուղարկել այն ամենը, ինչ գտնեմ մոտավոր լավով վերջնատեսքի կրեթեմ: Եթե դուք ինձ մի քիչ էլ ժամանակ տաք, ես որոշ բաներ էլի կանեմ»⁹:

ՍՍՀՄ ԳԱ ռուս գրականության ինստիտուտի (Լենինգրադ, «Պուշկինյան տուն») ձեռագրատանը պահվում է Ալեքսանդր Բլոկի արխիվը: Այդ արխիվում գտնվում են նաև Իսահակյանից կատարած Բլոկի թարգմանությունների ինքնագրերը¹⁰: Կարդում ես «Ալազյայի մանկներ» «Նախերգի» թարգմանությունը «Под алмазным венцом» — 12 տող է ընդամենը, թվում է, թե գրված է մեկ շնչով, բայց ահա ծանոթանում ես նրա սևագրին և տեսնում, որ միայն վերջին բառյակի որս տողերն ունեն 33 տարբերակ: Հարկ է ասել, որ այդ 33 տողից զրեթե յուրաքանչյուրը կրավարարի ուղածը բանաստեղծ թարգմանչին, բայց ոչ Բլոկին. բյուրեղացումը նրա արվեստի նշանաբանն էր: Համարյա չկա մի բանաստեղծության թարգմանություն, որ լուսնենա յուրաքանչյուր տողի իր տարբերակը. կատարելագործումը արդյունք է հղել վիթխարի ստեղծագործական աշխատանքի, որին Բլոկը նվիրվել էր ողջ էությունը:

Բլոկին, ռուսական դասական պոեզիայի «վերջին երգչին», որի գրչի տակ բառը հասնում էր անհասանելի բարձունքների ու մաքրության, թվում է, թե թարգմանելու համար ավելի մոտ ու հարազատ պիտի լինելին Իսահակյանի խոհաքնարական բնույթի երկերը, սակայն նա նույն վարպետությունն է ցուցաբերում նաև նրա ժողովրդաբանահյուսական բնույթի երկերի հանդեպ: Իսահակյանի այդ երկերի վերակերտման միջոցով Բլոկը ձգտում էր շոշափել ժողովրդային պոեզիայի տարերթը, ձևերը և փորձել (թեկուզ թարգմանության միջոցով) իրեն այդ բնագավառում: Մնացել է Բլոկի մի հետաքրքիր նամակը Բրյուսովին (1. XII. 1915), որ նա բացահայտում է

⁹ А. А. Блок. Собр. соч. Т. 8, с. 450.

¹⁰ См. ИРЛИ, архив А. Блока, ф. 654, оп. 1, № 154.

Իսահակյանին թարգմանելու իր որոշ նկատառումները. «Ձգտելով հնարավորին չափ մոտ մնալ բնագրին, ես, սակայն, նկատի եմ ունեցել, որ Իսահակյանի մոտ հանգը չի զբաղեցնում առաջնային տեղ, ուստի և, ես կամ բաց եմ թողել այն, կամ ինձնից եմ ավելացրել (ի դեպ, ոչ հաճախ), ավիտերացիաները ձգտել եմ պահպանել, ջտնալով, սակայն, աչքի չզարնել, հիշելով, որ բանաստեղծը պանդուխտ է ու գլուղացի»:

«Ճան» բառը ոչ միայն պահպանել եմ, այլև իմ կողմից մի քանի տեղ էլ ավելացրել եմ. ախր շատ լավ բառ է, Իհարկե, ձգտել եմ յուրազանց ավելորդ բառերի, սակայն, ցավոր, ոչ միշտ է դա հաջողվել...»¹¹:

Բլոկի այս խոստովանությունը յուրահատուկ մի բանալի կարող է հանդիսանալ, որի օգնությամբ բացահայտվում են նրա թարգմանչական աշխատանքի սկզբունքները: Խոսքն այստեղ հիմնականում վերաբերում է ժողովրդական բնույթի բանաստեղծությունների փոխադրման աշխատանքին, որն (ինչպես երևում է Բլոկի ձեռագրերից) առանձնապես դժվար է ընթացել: Ձգտելով առավել հարադատ մնալ բնագրին, Բլոկը պիտի կարողանար ուսերենում պահպանել հայկական երգի մեղեդայնությունը, բայց և խուսափել ավելորդ բառերից, որոնք խորթ կլինեին հայ երգին, և այստեղ Բլոկին օգնության է գալիս ուսական ֆոնկլորային երգը, նրա օրինաչափությամբ կառուցված բանաստեղծությունը: Դիմելով ուսական ֆոնկլորի օգնությանը, Բլոկը վարվել է ճիշտ այնպես, ինչպես երեսուն տարի հետո խորհուրդ պիտի տար իր ժամանակակից թարգմանչին Իսահակյանը (Մոսկվայում 1945 թ. հրատարակված իր պոեզիայի հատընտիրի ներածականում). «Այս բանաստեղծությունների մի մասը ժողովրդական ձևերով են կերտված, ուստի և դժվար են տրվում թարգմանման՝ հայ բանաստեղծության ձևերի ինքնատիպության պատճառով: Ինձ թվում է, սակայն, որ այդ դժվարությունը կարելի է հաղթահարել ուսական բանաստեղծության ձևերին դիմելով»¹²:

Բլոկը գրում է, որ հանգը Իսահակյանի մոտ առաջնային տեղ չի գրավում, ուստի և ինքը որոշ զեպքերում անտեսել է այն, կամ հանգավորել է՝ ձգտելով պահպանել հնչերանգները, սակայն չի շարաշահել դրանք: Նա կոհսել էր, որ Իսահակյանի բանաստեղծական արվեստում տեխնիկան՝ հանգադրումը, վերջինների շնչուր էականը չէին: Բարձրագույն բանաստեղծական արվեստը հարկ չունենր սովորական չափանիշների, ինչպես որ մի առիթով Իսահակյանը ասել է՝ «կրակը ձև ունի»:¹³ Բլոկը Իսահակյանի միայն թարգմանիչը չէր, այլև համախոհը, հեղինակակիցը:

Առավել կատարյալ է դառնում Բլոկ թարգմանչի ձեռագիրը հայ բանաստեղծի խոհաքնարական բնույթի երկերը վերակերտելիս: Այստեղ Բլոկը հիմնականում է անմատչելի բարձունքների ժողովրդական բանաստեղծությունը որպես միջնորդ այլևս պետք չէր Բլոկին: «Այս Իսահակյանը» նրա հետ խոսում էր նույն լեզվով: Բլոկին մոտ էին Իսահակյանի փոքր չափի խոհաքնարական բանաստեղծությունները, դրանք հիշեցնում էին նրան արևելյան դասական պոեզիայի իմաստուն երկերը: Երկբայական բանաստեղծության մեջ ասես ավելի խտացված է երևում բանաստեղծի տաղանդը: Այդպիսիք շատ են և՛ Բլոկի, և՛ Իսահակյանի մոտ: Նման բնույթի երկի թարգմանման դասական օրինակ է Իսահակյանի «Աղբյուրի մեջ մի մարալ...» բանաստեղծության թարգմանությունը.

Видит лань—в воде
Отражен олень.
Рыщет лань везде,
Ищет, где олень.
Лани зов сквозь сон
Услыхал олень.
Рыщет, ищет он,
Ищет ночь и день.

Իսահակյանից Բլոկի կատարած թարգմանությունների կեսը խոհաքնարական երկբայական է: Ինչպես է, որ բանաստեղծ թարգմանիչը դիմում է մի այնպիսի ձևի, որ հարապատ էր իր տարերթին, իր նախասիրած չափին: Սակայն այստեղ իրեն հարադատ էր ոչ միայն չափը (վերջին հաշվով դա չէր վճռողը), այլև աֆորիզմային, հակիրճ խոհը և նրա արտահայտման արվեստը: Հայտնի է, որ ինչքան տողը սեղմ է, ինչքան «բեռնավորված» է, այնքան դժվար թարգմանելի է:

¹¹ А. А. Блок. Собр. соч. Т. 8, с. 451.

¹² А. В. Исаакян. Избранные стихи. М., 1945, с. 3.

Նման լակոնիկ ձևերի թարգմանության մեջ առանձնապես փայլում է Բլոկի տաղանդը: Ահա մի օրինակ.

Ամեն գիշեր իմ պարտեզում	Ночью в саду у меня
Հալկան ուռին, հեզ ուռին	Плачет плакучая ива.
Վշտատուր լաց է լինում.	И безутешна она,
Լաց է լինում իմ ուռին:	Ивушка, грустная ива.

Եվ սրբում է առավոտու	Раннее утро олеснет—
Կույս արևը նազելի	Нежная девушка-зорька
Հուր ծամերով հեզ ուռենու	Ивушке, плачущей горько,
Արցունքները բյուրեղի...	Слезы—кудрями отрет.

Ի՞նչ է անում Բլոկը (նկատի ունենք ոչ միայն «Ամեն գիշեր իմ պարտեզում...» բանաստեղծության լարգամանությունը). ոգևորված բնագրի քնարական տարերքով, նա ասես վերանում է բնագրից և ինքն արարում պոեզիա. մի կրակի կողքին բռնկվում է մուտք...

Բլոկին, ինչպես ասացինք, առանձնապես հարազատ էին մայրական սիրո թեմայով գրված Իսահակյանի բանաստեղծությունները: Բլոկը, ինչպես և հայ բանաստեղծը, պաշտել է մորը: Ընդհանուր ընթերցելիս Բլոկը հասնում է մորը ուղղված նրա տողերին, բնական է, չէր կարող չնուգվել ու չզմայլվել. ինքը թերևս նման կարոտով ու տառապանքով մորը չէր դիմել. և «Նայրիկիս» բանաստեղծությունը թարգմանելիս նա ասես տենչում է Իսահակյանի հետ արտահայտել նաև իր զգացմունքներն ու սերը

От родимой страны удалился
Я, изгнанник, без крова и сна,
С милой матерью я разлучился,
Бедный странник, лишился я сна...

Բլոկն անշուշտ գիտեր, որ այդ տողերի հեղինակը, երբ ինքը թարգմանում էր Նրան, պանդուխտ էր, գտնվում էր հայրենիքից ու մորից հեռու՝ «օտար ավերում»: Այս հանգամանքը մարդկայնորեն ևս հուզում էր նրան:

Երեք տարի անց, իր կյանքի վերջին, «Հատուցում» անավարտ պոեմի եզրափակիչ տողերում Բլոկը դիմում է մորը՝ անկեղծ ու կարոտագին զգացումով, որպես միակ սրբուխյան, որպես միակ ռոգնական ապավենի:

«Նայրիկիս»-ի կողքին մի բանաստեղծություն ևս թարգմանել է Բլոկը՝ «Կրտսենեմ ահա,— լուռ երեկոյին...», որը սակայն դուրս է սոսկ մայրական սիրո թեմայի շրջանակներից. բանաստեղծի մոր կերպարն այստեղ վեր է ածվում հայ մոր հավաքական կերպարի: Մոր աղոթքի հիմքում ընկած է մի մտածողություն, որը թերևս հատուկ է դուռ հայ մորը, մի ժողովրդի մորը, որի պապականը սփռված են աշխարհով մեկ:

Երբեք այդ զգացումներն ու ապրումներն, առանձին պատկերներն ու մտքի վերջերս հաճախակի համընկնում են և՛ Իսահակյանի, և՛ Բլոկի ստեղծագործություններում, համընկնում են բրնարական համանման մտածելակերպի հողի վրա: Իսահակյանին թարգմանելիս Բլոկը զգացել է այդ համընկնումները և նրբորեն օգտագործել է դրանք նոր պոետական պատկերների ստեղծելիս: Այստեղ նրան օգնության են եկել և՛ նախկինում իր ստեղծած ու հայտնաբերած պատկերները, և՛ դուռ Իսահակյանի արվեստի պատկերները: Որոնք արձագանքում էին իր բանաստեղծական տարերքին, և «լսելի» էին իրեն: Անապատը, որ Իսահակյանի պոեզիայի նախասիրած պատկերներից էր, ծանոթ էր և Բլոկին: Դեռևս տարիներ առաջ, մինչ Իսահակյանին թարգմանելը, մենք հանգիպում ենք այդ պատկերին Բլոկի տարբեր բանաստեղծություններում: «Արու-Լալա Մահարի պառն է խորգմանել է Վ. Բրյուսովը, բայց ահա Բլոկը Իսահակյանից թարգմանել է մի բանաստեղծություն՝ գրված նշանավոր պոեմից յոթ տարի առաջ, ուր դարձանալի սեղմ կերպով դրսևորված են ապագա պոեմի մի շարք տարրերը: Խոսքը «Օտա»-ր, ամայի՝ ճամփերի վրա...» բանաստեղծության մասին է: Բլոկն այստեղ վարձանալի ունակությամբ ներթափանցել է բանաստեղծական կտավի յուրաքանչյուր խորանարդիկը և վերարտադրել նրա ոչ թե «գունավոր ու փայլուն» պատկերներ, այլ համարձակ վերակերտել կտավի հուժկու վրձնախաղերը:

Караван мой бренчит и плетется
Средь чужих и безлюдных песков.
Погоди, караван! Мне сдается,
Что из родины слышу я зов...

Հայրենիքը սրբություն էր և՛ Բլոկի, և՛ Իսահակյանի համար: Այն նրանց պոեզիայի մշտական թեման էր: Իհարկե, հայրենիքի պատկերը նրանց ստեղծագործություններում տարբեր երանգներ է ստացել, բայց մեկն է եղել հավատարմությունը, տազնապն ու տառապանքը հայրենիքի հանդեպ: Ոչ մի այլ թեմա, գաղափար ու մոտիվ չի վիճակի չի եղել նրանց սրբական ստեղծագործության մեջ ինչ-որ չափով, ինչ-որ ակնթարթ ստվերելու հայրենիքի պատկերը: «Հայրենիք» խորագրով մի մեծ շարք ունի Բլոկը իր 1907—1916 թթ. ստեղծագործությունում, այս շարքի գործերը, Բլոկի հայրենասիրական պոեզիան, առանձնապես մոռ ու սիրելի էին Իսահակյանին: Իսահակյանը իր ծոցատևերից մեկում արտագրել էր Բլոկի այդ շարքից հետևյալ տողերը.

Россия, нищая Россия,
Мне избы серые твои,
Твои мне песни ветровые—
Как слезы первые любви!

Այս քառատողից առաջ Իսահակյանը ունի հետևյալ գրառումը. «Ինչքան լավ եմ հասկանում ույր լեռների, հողմերի, գետերի, աղբյուրների, արտերի լեզուն. նրանք խոսում են հայերեն»:

Հայրենասեր Բլոկը սիրեց հայրենասեր Իսահակյանին: Բլոկի թարգմանած Իսահակյանի երկերից, թերևս, ամենահայրենասիրականը «Սալնո ձորերում, կրովի ձորերում...» բանաստեղծությունն է: Այստեղ Բլոկը հանդիպում է իր համար բոլորովին նոր տիպի հերոսի՝ հրացանը ձեռքին ընկած մահամերձ հայ հայդուկը իր վերջին երազում անգամ տեսնում է «հայրենի աշխարհն աղատ, ապահով...» և այդ վսեմ պատկերն աչքին մահանում է: Հայի համար հայրենիքը ազատությունը երազանք էր, և այդ երազանքով էին մահանում հայ ազատամարտիկները: Այս բանաստեղծությունը մի հավերժ անթառամ ծաղկեփունջ է հայ հայրենասեր հերոսների հիշատակին: Բլոկը շփվում էր հայրենասիրության մի նոր աստիճանի հետ, այն է՝ ինքնագոհություն չանուն երազանքի: Այս հերոսը Բլոկի համար հայտնություն էր, և դերագույն բարեխղճությամբ ու սիրով նա թարգմանում է այդ հայրենասիրական երկը աշխարհի մի ժամանակ, երբ իր հայրենիքը պատերազմի մեջ էր:

«Սալնո ձորերում, կրովի ձորերում...»-ը չափազանց դժվար թարգմանելի բանաստեղծություն է, որովհետև նրա միջով անցնում են երեք ժամանակ և երեք տարածություն. ներկա՝ իրականը, երազ՝ երազանքը երազի մեջ, ներկա՝ մահը, անկումը: Ներկան և մահը իրենց դույններն ունեն. կարծիրը (ներկան)՝ «Հայդուկն է ընկել խոր վերքը սըրտին, / Վերքը վարդի պես բացված կարմրուն», սևը (մահը)՝ «Հայդուկի վրա արծիվն է գալիս, / Ա՛խ, սև աչքերը արծիվն է հանում»: Երազը եթերային է, այն անցնում է ինչպես մեղեդի, երգ.

Տեսնում է... արտում հոմն է շրնկշնկում
Փայլուն գերանդին զրնգում է անուշ.
Ու փոցիս են քաշում սիրուն աղջկունք՝
Հայդուկի վրա երգելով անուշ...

Բլոկի թարգմանությունը «ապրում է» նույն ժամանակի և տարածության մեջ, ինչ բնագիրը: Նրա աչքին երևում են նույն գույները՝ ինչ Իսահակյանին. կարծիրը՝ «Рана—розы раскрытой цветок огневой», սևը՝ «Над долиной Сално туча хмуро встает.../И сраженному черные очи клюет/Опустивший в поле орел»: Նվ երազն էլ հնչում է իրր մեղեդի.

Снится нива—колосья под ветром звенят,
Снится—звякая, блещет коса,
Мирно девушки сено гребут—и звучат,
Всё о нем их звенят голоса...

Բլոկը և Իսահակյանը մեծ սիրահարներ էին: Իսկական բանաստեղծներին սիրո զգացումը տրված է լինում վերուստ, ինչպես բնության զգացումը, հայրենիքի զգացումը, մայրենի լեզվի զգացումը: Նվ ինչպես որ XX դարի ռուս պոեզիայում մեծագույն սիրերգականներից մեկը Բլոկն

էր, այնպես էլ հայ պոեզիայում՝ Իսահակյանը: Բլոկի սիրային երգը զերծ էր ժողովրդական բանահյուսության տարրերից, այն ավելի շուտ XX դարի մարդու մտածողություն է, ուր բեկվել են և՛ դարավերջի սիմվոլիստական-միստիկական տրամադրությունները. և՛ ժամանակի հումանիստական լուսավոր գաղափարները: Համաշխարհային դասական (մանավանդ ռոմանտիզմի) քնարերգականներին է դիմում Իսահակյանի սիրային քնարերգությունը. բայց և միշտ կենդանի պահելով ժողովրդաբանահյուսական պոեզիայի ավանդները:

Իսահակյանից Բլոկի թարգմանած բանաստեղծությունների մի զգալի մասը սիրային քնարերգության նմուշներ են՝ «Արևն իջավ սարի գլխուն...», «Ա՛խ, ալ վարդի, սիրո վարդի...», «Սև աչերեն շա՛տ վախեցի՛ր...», «Արագի փիին բոստանս լինի...», «Երագիս տեսա՛՛ օրո՛ր ու շրո՛ր», «Միշտ զգում եմ ես, որ մի հեռավո՛ր...», «Աղբյուրի մեջ մի մարտի...»: Բլոկի սիրական ռոտ հոգին ջերմանում էր Իսահակյանի պոեզիայի պայծառ ու անմիջական զգացումով. հուզիչ ու գունեղ քնարական պատկերներով: Բլոկը սիրել է սև գույնը, սևը՝ սև մազերը, սև աչքերը, սև զգեստները, սև ագռավը տարել են նրան սև գիշերների միստիկական ու խորհրդավոր աշխարհները: Այնպես որ Իսահակյանի «Սև աչերեն շա՛տ վախեցի՛ր» բանաստեղծությունը նա ընկալում էր որպես հարազատ թեմա: Բլոկին սիրելի էր նաև վարդի հավերժական քնարական պատկերը. հիշենք նրա նշանավոր դրամայի անունը՝ «Վարդ և խաչ» («Роза и Крест»), «Розы—страшен мне цвет этих роз.../Это—сердце в плену у Кармен», գրում է Բլոկը: «Ա՛խ, ալ վարդի, սիրո վարդի...» բանաստեղծությունը գերում է Բլոկին պոետական վառ երևակայությամբ, կախարդական այն խաղով. թե վարդի ու փշի սիմվոլները ինչ մետամորֆոզների են ենթարկվում և ինչ դրամատիկ պատկերներ են կերտում:

Բլոկի՝ սիրո մանրանկարի վարպետի տաղանդը դրսևորվել է նաև նրա թարգմանական արվեստում: Դրա դասական օրինակ կարող է հանդիսանալ Իսահակյանի «Միշտ զգում եմ ես, որ մի հեռավոր...» բանաստեղծության թարգմանությունը, որում ղուգորդվել են և՛ մտածողությունը, և՛ գրելատեղը: Սա այն Իսահակյանն է, որն ուղղակի խոսում է Բլոկի հոգու հետ: Հայ բանաստեղծի անուրջը, թախիծը, կարոտը Բլոկը, ասես, վերապրել է անձնապես:

Իսահակյանի «մի հեռավոր, օտա՛ւ աշխարհ» երկրի քարտեզի վրա կոնկրետ անուն չունի, նրա անունը պետք է փնտրել յուրաքանչյուր սիրահարված մարդու հոգու քարտեզում...

Да, я знаю всегда—есть чужая страна.
Есть душа в той далекой стране,
И грустна, и, как я, одинока она,
И сгорает, и рвется ко мне.

Այս զգացումը կարող էր ունենալ, և հիմալի ունեցել է, ինքը Բլոկը՝ «օտար աշխարհում» գտնվող սիրած էակի զգացումը, որին հավենտ, արթմնի թե երագում, տենչում է մարդու հոգին: 1915 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին (այսինքն Իսահակյանին թարգմանելու շրջանին մոտենող ժամանակ) Բլոկի կինը՝ Լյուբով Դմիտրիևնան գթության բույր էր աշխատում Գալիցիայի ճակատամերձ մի զինվորական հոսպիտալում, իսկ Բլոկը Պետրոգրադում էր, և ինչպես միշտ, երբ Լյուբան իրենից հեռու է եղել, բանաստեղծը տենչում էր նրան: Տարերայնորեն նա ներկա է նաև «Да, я знаю всегда—есть чужая страна...» թարգմանության տողերում:

Իսահակյանի սիրո էակին Բլոկը իր թարգմանության ուսուկան տեքստում օժտում է իր կնոջը՝ Լյուբային հատուկ իրական գծերով: Ահա բնագրի երկրորդ քառյակը և Բլոկի թարգմանությունը.

եվ թվում է ինձ, որ սուրբ համբույրով
ես փայփայում եմ ձեռները նրա.
եվ գուրգուրում եմ, գրգվում կարոտով՝
Քնքնուշ գլուխը իմ կրծքի վրա...

Даже кажется мне, что к далекой руке
Я прильнул поцелую святым,
Что рукой провожу в неизбежной тоске
По ее волосам золотым...

«Քնքնուշ գլուխը իմ կրծքի վրա» տողը դարձել է՝ «По ее волосам золотым», Բլոկը այստեղ նկատի ունի Լյուբայի ոսկեգույն մազերը: Գալիցիայում գտնվող Լյուբային ուղղված բանաստեղծական շարքում Բլոկն այսպիսի տողեր ունի («Перед судом» բանաստեղծությունում).

Эта прядь—такая золотая
Разве не от старого огня?

Ինչքան հարադատ պիտի լինեն Իսահակյանի այս բանաստեղծությունը Բլոկին, որ նա Իսահակյանի առաջին հայացքից վերացական թվացող սիրո էակի մեջ տեսնում է իր Լյուբային և որպեսզի պատկերացրածին հաղորդի կոնկրետ հատկանիշ, գուցե և անկախ իրենից, Լյուբայի մալերի գույնն է վերագրում բանաստեղծության հերոսուհուն:

Բլոկի և Իսահակյանի պոեզիայում կա նույն վերնագիրը կրող մի բանաստեղծություն՝ «Ռավեննայում»¹³։ Խորագրի զուգահեռությամբ, սակայն, չի ավարտվում նրանց կապը։ Ռավեննան խորհրդածությունների հիմք է հանդիսացել Լեկու բանաստեղծների համար։ Իրարից անկախ և տարբեր ժամանակներում, նրանք գրել են բանաստեղծություններ, որոնք առնչվում են համանման գաղափարի առտահայտմամբ։ Բանն այն է, որ գողտրիկ ու համեստ այս քաղաքը նախկինում մեծ համբավ է ունեցել որպես հարավային գոթերի արքա Թեոդորիք Մեծի հիմնած Արևմտահռոմեական կայսրության հզոր մայրաքաղաք։ Վաղ քրիստոնեության շրջանում այնտեղ կառուցվել են բազմաթիվ հոյակապ եկեղեցիներ, այնտեղ իր կյանքի վերջին տարիներն է անցկացրել վտարանդի Դանտեն։ Սակայն հետագայում քաղաքն անկում է ապրել։

Նվաճա, հայ և ռուս բանաստեղծները, կանգնած երբեմնի այդ փառահեղ մայրաքաղաքի ավերակների առաջ, խորհում են փառքի, իշխանության և մարդկային կյանքի անցողիկության ու աշխարհի հավիտենականության մասին։

Բլոկի փիլիսոփայական խոհը անմիջական կապ ունի Ռավեննայի պատմական անցյալի հետ։ Նա վերհիշում է և՛ Թեոդորիք Մեծին, և՛ Գալլա Պլացիդիային (Արևմտահռոմեական կայսրության թագուհուն), և՛ Դանտեն։ Բլոկը ընդհանրապես սիրում էր պատմությունը արտացոլել կոնկրետ, արվական պատկերներով ու կերպարներով։ Նրա «Ռավեննայում» բանաստեղծության ենթատեքստը ինչ-որ չափով վերծանում է բանաստեղծության բնաբանը (որը վերցված է Ֆլորենցիայի Santa Maria Novella եկեղեցու ժամացույցի տակ փորագրված արձանագրությունից)։

Так незаметно многих уничтожают годы,
Так приходит к концу всё сущее в мире;
Увы, увы, невозвратно минувшее время,
Увы, торопится смерть неслышным шагом.

Իսահակյանի մտածողությանը մոտ էին և՛ այս բնաբանը, և՛ Բլոկի բանաստեղծությունը, մանավանդ նրա առաջին քառատողը.

Всё, что минуло, всё, что бrenно,
Похоронится ты в веках.
Ты, как младенец, спишь, Равенна,
У сонной вечности в руках.

Իսահակյանի մտորումը, գոյացած դարածին Ռավեննայում իր դպացածից (որը նրա ստեղծագործական երեակայության մեջ վերափոխվել էր Արարատի հավերժ պատկերի), ուղղված է, սակայն, համայն մարդկությանը և պարփակում է իր հերթին հավերժական իմաստ։

Ի՞նչ՝ Բլոկի, թե՛ Իսահակյանի գործերում Ռավեննան (և Արարատը) մնում են մարդու կյանքի ու աշխարհի ունայնության ըմբռնման բարձր բանաստեղծական արտահայտություն։

1915 թ. դեկտեմբերի վերջին Բլոկն ավարտեց Իսահակյան թարգմանելը։ Թարգմանված էր քսան բանաստեղծություն, մի ամբողջական շարք, որը վերջիններից մեկը եղավ նրա ստեղծագործական կյանքի բանաստեղծական շարքերից։ Թեև Բլոկը զգում էր իր կատարածի որակը, բայց և ինչպես խոսկալուն ստեղծագործող, երկյուղել է. «Դուցե և քիչ բան է հաջողվել, բայց և այնպես, թարգմանիչը սիրել և զգացել է բանաստեղծին ինչպես որ կսրողացել է» (Պ. Մակինցյանին գրած նամակից, 1 դեկտեմբերի 1915)¹⁴։

Մեծ բանաստեղծը հարկ չի համարել իր կատարած գործն արժեքավորել, թողնելով այդ գրաբնագատությունը, բայց հաճախ իր թարգմանած բանաստեղծին նա հարկ համարեց գնահատել,

¹³ Ռավեննան մի փոքրիկ քաղաք է Ադրիատիկ ծովի ափին, ուր 1909-ին, Իտալիա կատարած ճամփորդության ժամանակ այցելել էր Բլոկը, իսկ 1926-ին՝ Իսահակյանը, երբ բնակվում էր Վենետիկում։

¹⁴ Звезда Востока. Тифлис, 1936, № 1, 15 января

5 «Հանդես». N 4

աշխարհի մեծ բանաստեղծներից առաջինը վավերացնելով Իսահակյանի տեղն ու նշանակությունը ԱՄ զարի պոեզիայում, պատմությունը լրացնելով իր գնահատականը. «...Իսահակյանը առանձնակարգ բանաստեղծ է, թերևս, այդպիսի թարմ ու անմիջական տաղանդ այժմ ամբողջ նվիրապալում չկա» (Ա. Ա. Իզմայլովին գրած նամակից, 28 հունվարի 1916)¹⁵։ Ծայրաստիճան ճշմարտախոս, մարդկային հարաբերություններում գուսպ և նույնիսկ, սառը, ամեն տեսակ գովք ու գովասանք առնամառնող Բլոկը բացառիկ դեպքերում միայն կարող էր նման խոսքեր ստել որևէ ստեղծագործողի մասին։ Այս խոսքերը նաև վկայությունն են այն ներգործության, որ թողել է Բլոկի վրա Իսահակյանի պոեզիան։ Դա Իսահակյանի պոեզիայի բացառիկ ժողովրդայնությունն էր, որը ողևորեց մեծ հայրենասեր Բլոկին և գուցե ինչ-որ չափով նրան՝ վսեմ իդեալների, «Անձամեծություն» և Պետերբուրգի երգչին հաղորդեց ժողովրդական տարերքի զգացողություն։ Հարկ է ասել, որ Իսահակյանի որոշ ազդեցությունը նկատելի է ավելի շուտ ոչ թե Բլոկի որևէ կոնկրետ ստեղծագործության վրա, այլ նրա մտածողության, 1916-ից հետո ևս ոչ տարիների նրա աշխարհայեցողության վրա։ Պետական մեծ սխրանքի նախաշեմին կանգնած բանաստեղծը հոգու բոլոր և՛ և՛ ներքին ընկալեց Իսահակյանի պոեզիայի ժողովրդական, դեմոկրատական էությունը։

1916-ի մարտի 22-ին գրված Բլոկի «КОРШУМ» («Ուրուրը») բանաստեղծության մեջ ռուս մոր աղոթքը արձագանքում է Իսահակյանից թարգմանած «Բալաս ունի հնգու-մասթա...» բանաստեղծության մոր աղոթքին։

Պատահական չէ, որ «Ուրուրը» Բլոկի պոեզիայից Իսահակյանի ամենախիթած բանաստեղծությունն էր, Բլոկի իր ունեցած գրքերում Իսահակյանը «Ուրուրի» դիմաց նշան է արել, քանիցս մտադրվել է այն հայերեն թարգմանել։

Մայրական սիրո, որզուն կորցնելու մայրական տագնապի և մոր ողբի մոտիվներով հանդիսանում ենք երկու երկ, որոնք նույնպես արձագանքում են իրար Բլոկի «СЧАСТЬЕ» բանաստեղծությունը՝ գրված 1906 թ. և Իսահակյանի «Ջութահավս»-ը։ Շտապ տուն եկա՛վ...-ը գրված 1919-ին։ Այստեղ ևս պետք չէ որոնել մակերեսային նմանություններ, բոլորովին համընկնումներ։ Այս դեպքում մերձեցնողը ասելիքն է, երկի մարդասիրական ուղղվածությունը։

Բլոկի մոր երգը և Իսահակյանի մոր արնաները նույն էությունն ունեն, նրանք բխում են աշխարհի ամենաբարի սրտից։ Բլոկն ու Իսահակյանը նույն գույթն ու կարեկցանքն են տալիս մայրական սուրբ հոգու առաջ և նույն ատելությունը՝ պատերազմների, բռնությունների, դարիս խեղճեղությունների հանդեպ։ Նրանց փխրուն բանաստեղծական հոգիները, սակայն, կրում են մեծագույն տառապանք և, միաժամանակ, մեծագույն բողոքը մարդու ճակատագրի նկատմամբ։ Ներքին նալում են ժամանակակից աշխարհին նույն հայացքով, Ռուս բանաստեղծի վիշտն ու տառապանքը մարդու հանդեպ, պաշտամունքը մոր և հայրենիքի հանդեպ մոտ ու հարազատ էր Իսահակյանին այնպես, ինչպես հայ բանաստեղծի պայծառ հայրենասիրությունը և անմիջական քնարականությունը մոտ ու հարազատ էր Բլոկին։ XX դարի գրականության պատմության խառնուրդներում նրանք պետք է հանդիպեն։

1916 թ. գարնանը Սաբաիմ Գորկու խմբագրությամբ Պետերբուրգում լույս է տեսնում «Հայ գրականության ժողովածուն», ուր Բլոկի թարգմանությամբ հրատարակվել էին Իսահակյանից հինգ բանաստեղծություն, Մինչ այդ Բլոկը մի քանի թարգմանություն տպագրել էր «Виржевы» ВЕДОМОСТИ» թերթում (1916, մարտի 20) և Գորկու հիմնադրած «ДЕТОНСЬ» գրական ամսագրում (1916, № 1)։ Նույն թվականի աշնանը, Վալերի Բրյուսովի խմբագրությամբ Մոսկվայում լույս տեսավ «Հայաստանի պոեզիան»։ Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ ժողովածուն, որ տեղ էին գտել Բլոկի թարգմանությամբ Իսահակյանի 14 բանաստեղծություն (ի դեպ, Բլոկը թե՛ Գորկուն, թե՛ Բրյուսովին հանձնել էր իր կատարած տարբեր թարգմանությունները, այնպես որ ալո երկու ժողովածուներում նրա ոչ մի թարգմանություն չի կրկնվում)։

Բլոկի թարգմանությունները մեծ արձագանք գտան ռուս իրականության մեջ։ Թերևս առաջին անգամն էր, որ ռուս ընթերցողին Իսահակյանը ներկայանում էր իր տաղանդի ողջ զորությամբ, պոետական նախաստեղծ գեղեցկությամբ։ Բլոկը բացեց Իսահակյանին ռուս ընթերցողի համար։

Թարգմանչական աշխատանքներն ավարտելուց հետո Բլոկը ներքին մի սիրով է անդրադարձել և՛ հայ պոեզիային, և՛ Իսահակյանին։ Այս մասին մենք կարող ենք Բլոկի ժամանակակից և ընկերոջ, ռուս անվանի արվեստաբան Միխայիլ Բարենչիկովի հուշերում. «...Լինելով ռուսներին հատուկ լայնասիրտ հոգու տեր մարդ, Ա. Ա. -ը իր զրույցներում սիրով էր անդրադառնում ուրիշ

¹⁵ А. А. Блок. Собр. соч. Т. 8, с. 455—456.

ժողովուրդների հոգևոր մշակույթին: Նրան հետաքրքրում էր հայկական պոեզիան, և նա հիաց-
մունքով էր խոսում Ավետիք Իսահակյանի տաղանդի մասին»¹⁶:

Հայտնի է, որ ուսման ընթացքում Սերգեյ Ռախմանինովը Բլոկի թարգմանած «Ночью
в саду у меня» Իսահակյանի բանաստեղծության հիման վրա գրել է իր նշանավոր «Ивушка»
առմանսով: Ռախմանինովը ղմայլվել էր Իսահակյանի բանաստեղծության մեղեդայնությամբ, նրա
գրելաոճով: Նշանավոր առմանսով ստեղծելուց հետո նա իրեն համակած զգացմունքներն է հայտ-
նում իր վաղեմի բարեկամ Մարիետա Շաշինյանին. «Ամենից հեշտ ստացվեց Իսահակյանի
«Ուռին», Չգիտեմ, ում վաստակն է այդ, թարգմանչի՝ Ալեքսանդր Բլոկի, թե իր՝ հայ բանաստեղ-
ծի, սակայն «Ուռին» զարմանալի մեղեդի է, մեղեդին ներդրած է բուն բանաստեղծության մեջ,
է: Ինձ մնում էր միայն վերծանել այն... Այդպես կարող եմ գրել միայն իսկական ժողովրդական
բանաստեղծները»¹⁷:

Իրը լույս տեսան Գորկու և Բրյուսովի խմբագրությամբ հայ գրականության անթոլոգիաները,
Իսահակյանը ապրում էր ժենևում, նա չէր էլ ենթադրում, որ իրեն թարգմանել էին դարի ուսման
ժառանգության բանաստեղծներ Բլոկը և Բրյուսովը: Նա անհամբերությամբ սպասում էր այդ գրքին և
միայն 1917 թ. փետրվարի վերջերին է ստանում այն՝ մոսկովյան հայկական կոմիտեից: Ահա
ինչ է գրում այդ գրքի մասին Իսահակյանը իր ընկերոջը՝ Գարեգին Լևոնյանին (1917 թ. մարտի
28-ին ժենևից). «Ստացա վերջապես. այո՛, հույակալ գիրք է. մեծ ջանք, մեծ ճաշակ...» (VI, 170):
Իսահակյանն անձամբ ծանոթ չէր Բլոկին. 1904—1905 թթ., երբ նա լինում է Մոսկվայում,
Բլոկը դեռ չորս ևր էր ևրեում գրական աշխարհում, իսկ երբ Իսահակյանը վերադարձավ Եվրոպայից,
Բլոկն այլևս չկար... Սակայն նա ծանոթ էր Բլոկի ստեղծագործությանը հենց սկզբից, և մինչև
իսկ գրել էր նրա մասին: Խոսքը վերաբերում է 1908 թ. Թիֆլիսի «Վտակ» (№ 10) հայկական
օրաթերթում Իսահակյանի տպագրած «Թուսաց գրականությունը 1907 թվին» գրախոսականին:
1917 թ. ժենևի ուսանական գրախոսությունում Իսահակյանը ձեռք է բերում Բլոկի հետևյալ զբո-
րերը՝ «Стихотворения. Книга вторая (1904—1907)», «Стихотворения. Книга третья
1905—1914») և «Траг», որոնք 1916-ին լույս էր ընծայել «Мусагет» պետերբուրգյան հրատա-
րակչությունը: Սրանք Բլոկի կենդանության օրոք լույս տեսած ամենակատարյալ և ամբողջական
հրատարակություններն էին:

Մի առանձին սիրով Իսահակյանը պաշտոնապես էր ձևավորապես գրողների հրատարակչության
լույս ընծայած Ալ. Բլոկի երկերի 12 հատորյակի յոթերորդ հատորը՝ «Թարգմանություններ» (լույս
էր տեսել 1932-ին): Այստեղ առաջին անգամ Բլոկի երկերի ժողովածուների մեջ ղեկավարված էին
նրա թարգմանությունները Իսահակյանից: Իսահակյանին թանկ էլ, այն փաստը, որ Ալեքսանդր
Բլոկը իր կարճատև, բայց և հերոսական ու զրամատիկ կյանքում հասցրեց նվիրումով ու խորն
ակնածանքով թարգմանել իր բանաստեղծությունները, դրանով իսկ, ուսներենի միջոցով, նաև
եվրոպական ընթերցողին ներկայացնել իր պոեզիան:

Բլոկի կատարած թարգմանությունների հանդեպ նա ուներ նույն վերաբերմունքը, ինչ իր
ընկերների: Ռուսերեն իր նոր հրատարակվող գրքերում նա ցանկանում էր տեսնել, և միշտ ամ-
բողջությամբ, Բլոկյան շարքը: Իսկ երբ որևէ մեկը խիզախում էր թարգմանել Բլոկյան այդ
շարքից որևէ գործ, Իսահակյանը տարակուսում էր, ասելով. «Ինչ կարիք կար, չէ՞ որ
նրանից լավ չեն թարգմանի»: Իր պոեզիայից կատարվող ուսներեն նոր թարգմանությունների ո-
րակը որոշելու նրա մշտական շափանիչը Բլոկյան թարգմանություններն էին: Բլոկի կատարած
գործը կատարյալ դպրոց հանդիսացավ Իսահակյանի հետագա թարգմանիչների համար:

Բանաստեղծուհի Վերա Զվյագինցևան այսպիսի տողեր ունի Բլոկին և Իսահակյանին ձոնած
բանաստեղծության մեջ.

Побратались в стихах два поэта,
Чтоб остаться в родстве навсегда...

¹⁶ Александр Блок в воспоминаниях современников. Т. 2, М., 1980, с. 164.

¹⁷ Слово об Аветике Исаакяне. Ереван, 1975, с. 72.

Ռուս սօս ալլ անվանի բանաստեղծ՝ Միխայիլ Դուդինը, որը 1978 թ. առանձին գրքով («С жаворонком на плече») հրատարակեց Իսաակյանից կատարած իր թարգմանությունների ծավալուն շարքը, այդ գրքի առաջաբանում գրել է. «Ինձ առանձնապես հաճելի է հիշել, որ Նեվաի ափին գտնվող իմ հարազատ քաղաքում, Ռուսաստանի հանձարեղ բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը մեծագույն սիրով թարգմանել է իր եղբայր Ավետիք Իսաակյանի բանաստեղծությունները, դրանք առաջինը մերձեցնելով համաշխարհային մշակույթին... Ձգտելով ձգարտություն, նա այդ թարգմանությունների մեջ ներդրել է իր ողջ հոգրս»¹⁸:

ИСААКЯН И БЛОК

А. В. ИСААКЯН

(Резюме)

В статье рассматриваются три основных аспекта темы «Исаакян и Блок»: история создания переводов Блока из Исаакяна, поэтика этих переводов, типологические связи поэзии Исаакяна и Блока. Переводы из Исаакяна можно считать вершиной переводческого искусства Блока. Он первым из величайших русских поэтов XX века обратился к Исаакяну и тем самым еще в начале века открыл его для русского (а отчасти и для европейского) читателя. В этих переводах раскрылись также новые грани поэтического мастерства Блока—это относится и к искусству передачи стихов в духе фольклорной песни, и к воплощению поэтических миниатюр Исаакяна с их поэтикой Востока, армянского средневековья. Работая над Исаакяном, общаясь с его патриотической поэзией, с образом его лирического героя—сына своей земли, борющегося за свободу родины, Блок в переломный период истории России несомненно испытал влияние его поэзии и мировоззрения, и это отразилось в блоковских произведениях после 1915 года. Мы рассматриваем также типологическое родство ряда произведений Блока и Исаакяна, написанных в основном на темы материнской любви, любви к родине, имеющих гуманистический и антивоенный характер.

¹⁸ А. В. Исаакян, С жаворонком на плече. Перевод и предисловие М. Дудина: Л., 1978, с. 10.